Дмитрий Шостакович – гордость советской музыкальной культуры, гений симфонизма, его жизненный путь и как композитора, и как человека связан с трагическими страницами советской истории, получившей отражение в его произведениях. “Этюд” Дмитрия Шостаковича исполнила студентка педагогического университета им. Хачатура Абовяна Аида Геворгян (класс Лили Хачатурян).

7



*Лиля Оганисян*



*Артур Агаджанов*

## “Любимые песни СССР”
### (к 100-летию со дня образования Союза Советских Социалистических Республик)

*“Я сочетаю разные музыкальные языки”*, – так говорил о своем творчестве великий композитор Арам Хачатурян. Начав учиться музыке в 19 лет, он спустя краткое время покорил весь мир. В 2014 году рукописи Арама Хачатуряна внесены ЮНЕСКО в Международный реестр всемирного документального наследия “Память мира”. В 1932 году родилась Сюита для фортепиано, первая часть которой – Токката – завоевала широкую известность. Созданная Хачатуряном в юные годы, Токката и сейчас сохранила всю свою прелесть и силу воздействия. *“Прошло много лет со дня возникновения этой динамичной блестящей пьесы, но исполнение ее и поныне вызывает энтузиазм публики”*, – писал композитор Родион Щедрин. – *Нет профессионала, который не знал бы ее наизусть, не относился бы к ней с чувством горячей симпатии”*. Токкату для фортепиано исполнила доцент педагогического университета им. Хачатура Абовяна Лиля Хачатурян.

Если говорить о советской песне, невозможно не вспомнить Иосифа Давыдовича Кобзона. Это человек–эпоха. Про него в шутку говорили, что Кобзон






спел советских песен больше, чем их существует на самом деле.

Композицию “Мне доверена песня” (музыка Георгия Мовсесяна, слова Льва Ошанина) из репертуара Иосифа Кобзона исполнил победитель и лауреат республиканских и международных конкурсов, солист Государственной академической хоровой капеллы Армении Артур Агаджанов.

Во время концерта не обошли вниманием сидящих в зале почетных членов Организации “Россия”, блокадников и ветеранов, людей чья жизнь служит для нас примером подражания и гордости.

В завершение концерта прозвучала популярная песня “Мой адрес не дом и не улица” (музыка Давида Тухманова, слова Владимира Харитонова) в исполнении Артура Агаджанова.

**МАРГАРИТА БАГДАСАРЯН**
*музыковед, доцент
Армянского государственного
педагогического университета
им. Х. Абовяна*

## Армения и русские романсы: “Романсиада 2022»



*Виктория Мелконян*

4 декабря в Зале Церковных Соборов Храма Христа Спасителя прошел финал XXVI московского Международного конкурса молодых исполнителей русского романса “Романсиада” – одного из самых масштабных и авторитетных творческих состязаний, целью которого является сохранение жанра силами молодого поколения. Конкурс проходит уже более четверти века и объединяет исполнителей русского романса из разных уголков планеты.

“Романсиада” была организована в 1997 году пианисткой и музыковедом, Заслуженной артисткой России Галиной Преображенской в качестве альтернативы агрессивному засилию поп–культуры. В конкурсе участвуют молодые исполнители в возрасте от 17 до 27 лет, которые получают возможность не только принять участие в престижном вокальном конкурсе, но и получить консультации и мастер-классы членов жюри и лучших пианистов–концертмейстеров России. Конкурс также занимается организацией концертов для лауреатов и призеров.

В конце 2017 года специализированное учреждение Организации Объединенных Наций по вопросам образования, науки и культуры (ЮНЕСКО) объявило о поддержке Международного конкурса молодых исполнителей русского романса “Романсиада”. *“За сохранение культурного наследия, повышение осведомленности о творчестве и важности поощрения культурного сотрудничества между странами, а также, чтобы подчеркнуть значение взаимопонимания и мира во всем мире”*, – сообщается в официальном письме генерального директора ЮНЕСКО Ирины Боковой.

В том же 2017 году, при поддержке ЮНЕСКО, была определена официальная дата празднования Международного Дня русского романса – последняя суббота января, которая совпадает с датой проведения ежегодной музыкальной программы “Звезды “Романсиады» в Кремле”.

Конкурс быстро получил статус Международного: его этапы проходят в России и в зарубежных странах, собирая огромное число участников. Так, региональные конкурсы проводились в Ереване, Твери, Смоленске, Астрахани, Казани, Кемерово, Туле, Минске, Могилеве, Каунасе. Сегодня география конкурса стала намного шире: конкурс проходит и в Копенгагене (Дания), Сан Марино (Италия), Гатчине (Ленинградская область), Бишкеке (Киргизия), Шымкенте (Казахстан), Гомеле (Белоруссия), Москве (район Марьино), Софии (Болгария), Томске и Гамбурге (Германия).

Конкурс проходит под патронатом Министерства культуры России и Правительства Москвы. Связи с зарубежными странами помогает поддерживать Фонд “Русский мир”, вносzа значительный вклад в организацию конкурса.



*Председатель Музыкального общества Армении, профессор ЕГК им. Комитаса, сопредседатель конкурса “Армянская Романсиада” Давид Казарян*

Региональные конкурсы – основа “Романсиады”. Именно здесь проходят предварительные отборы 12 участников финала. Еще несколько конкурсантов выбираются для участия в Гала–концерте и присуждения им специальных призов, таких, как “Надежда Романсиады”, “Приз зрительских симпатий”, “Мисс Романсиада”. Финал конкурса состоит из трех туров. В 1–ом туре участники исполняют романс композитора–классика, во 2–ом туре – романс современного композитора и в 3–ем туре – салонный (городской, бытовой, цыганский) романс.

Все три тура проходят в один день в Москве, в Колонном зале Дома Союзов и завершаются торжественным Гала–концертом в Государственном Кремлевском дворце.

Многие участники конкурса – сегодня известные артисты и выступают на престижных сценах мира. Например, один из лауреатов “Романсиады” Арсен Согомонян сегодня исполняет партии тенорового репертуара на ведущих музыкальных площадках мира. Среди участников конкурса отметим имена Марины Поплавской, Сергея Волчкова, Ирины Крутовой, Максима Катырева и многих других.

За годы существования конкурса отметим наших соотечественников–победителей конкурса: Арсена Согомоняна – I премия (2001 год), Ануш Аракелян – II премия (2013 год) и Яну Айвазян – дипломант (2020 год).

В этом году обладателем Гран–при “Романсиады” стал 23–летний Дониер Алимов из Узбекистана. Первую премию на престижном конкурсе завоевали Аяжан Куаншалиева из Казахстана, россиянин Кирилл Панкевич и наша соотечественница, студентка 4 курса ЕГК (класс профессора Гаяне Гегамян), победительница III ежегодного конкурса “Армянская Романсиада” (Гран–при) Виктория Мелконян.

О конкурсе “Армянская Романсиада” Виктория Мелконян узнала на первом курсе ЕГК, но тогда еще не была уверена в своих силах. И лишь на четвертом курсе с благословения педагога, руководителя кафедры сольного пения ЕГК, профессора Гаяне Паруйровны Гегамян она приняла решение участвовать в конкурсе. Это был первый серьезный конкурс студентки, к которому она подошла серьезно, с большой ответственностью и удостоилась не только Гран–при, но и чести представлять свою страну и родной вуз на престижном международном конкурсе “Романсиада”.

На конкурсе в Москве надо было исполнить три номера: произведения классиков XIX – XX веков, романсы современных авторов и салонные романсы. В первом туре Виктория исполнила “Христос воскрес” Рахманинова, во втором – “Серенаду” Ирины Шабординой, которая, как выяснилось, была в составе жюри. А в заключительном туре – “А напоследок я скажу” Андрея Петрова.

По мнению Виктории, ее победа на конкурсе стала возможной благодаря тому, что ей близка русская культура, так как до переезда в Армению она довольно долгое время жила в России, в Перми.

Отметим, что первый конкурс “Армянская Романсиада” был организован в 2020 году Московским культурно–деловым центром “Дом Москвы” в Ереване и Благотворительным фондом сохранения искусства русского романса “Романсиада” при содействии Ереванской государственной консерватории им. Комитаса и Музыкального общества Армении. Кстати, “Армянская Романсиада” интересна тем, что здесь в конкурсной программе наряду с русскими исполняются и романсы армянских композиторов. В 2020 году организаторы “Армянской Романсиады” предложили Галине Сергеевне Преображенской, чтобы в третьем туре “Армянской Романсиады” звучали романсы армянских композиторов. Она сначала удивилась, но после посещения региональных туров в Ереване, согласилась с предложением.

Победителем первой “Армянской Романсиады” стал Тигран Мелконян (студент ЕГК), победительницей 2021 года стала Ани Кущян (Молодежная оперная программа Ереванского национального академического театра оперы и балета имени А.Спендиаряна). Музыкальное общество Армении с первых дней проведения “Армянской Романсиады” всесторонне содействует Московскому культурно–деловому центру в организационных вопросах.

В этом году в состав жюри “Романсиады” впервые был включен представитель Армении – заслуженный деятель культуры РА, председатель Музыкального общества Армении, профессор Ереванской государственной консерватории им. Комитаса, сопредседатель конкурса “Армянская Романсиада” Давид Казарян. Как отметил сам Давид Гарсеванович *“мы, конечно, и в другие годы присутствовали и вручали призы, но на этот раз уже сами судили участников. И это, безусловно, показатель уровня “Армянской Романсиады” и заслуга Дома Москвы в Ереване и лично Ваграма Вардкесовича Карапетяна* (генеральный директор МКДЦ “Дом Москвы” в Ереване. – *ред.*)”.

По приезде из Москвы Давид Казарян выступил на очередном ученом совете ЕГК, где было принято решение, что уже с сегодняшнего дня консерватория начнет готовиться к “Армянской Романсиаде–2023”.

*материал подготовила*
**МАРГАРИТА КИРАКОСЯН**
*музыковед, главный редактор газеты “Еражишт”*

## Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակը


Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, դիրիժոր Սերգեյ Սմբատյան

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբն այս օրերին հյուրախաղերով հանդես է գալիս Միացյալ Թագավորությունում:

2023 թ.նշվում է հայ մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակը, և Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի ելույթներով տրվում է Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների մեկնարկը:

Համերգային շրջագայությունը սկսվել է փետրվարի 13-ին. առաջին ելույթները՝ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ, տեղի են ունեցել Մանչեսթերում, Քեմբրիջում:

Հյուրախաղերն ընդգրկում են 10 համերգ. դրանք տեղի կունենան նաև Լոնդոնի, Էդինբուրգի, Շեֆիլդի, Բիրմինգհեմի և Մեծ Բրիտանիայի այլ քաղաքների հեղինակավոր համերգասրահներում: Նկատենք, որ համերգների մեծ մասի տոմսերն ամիսներ առաջ սպառվել են:

Համերգային ծրագրերի առանցքում Խաչատրյանի կոմպոզիտորական գանձարանի ամենահայտնի և ազդեցիկ նմուշներն են. երկացանկը ներառում է ջութակի Կոնցերտը, հատվածներ «Սպարտակ» և «Գայանե» բալետներից:

Նվագախմբի հետ որպես մենակատար հանդես են գալիս բրիտանացի անվանի ջութակահարներ՝ Ջենիֆեր Փայքը և Քլոյե Հանսլիփը:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգները Միացյալ Թագավորությունում անցնում են լեփ-լեցուն դահլիճներում: Խաչատրյանի ջութակի Կոնցերտը Ջենիֆեր Փայքի կատարմամբ լայն արձագանք է ստանում ունկնդիրների շրջանում:

Համերգներից առաջ իրականացվում են նաև քննարկումներ, որոնց ընթացքում դիրիժոր Սերգեյ Սմբատյանը ներկայացնում է Արամ Խաչատրյանի կոմպոզիտորական ժառանգությունը և հայ կատարողական արվեստը:

Միացյալ Թագավորությունում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հյուրախաղերի իրականացմանն աջակցել են նաև անհատներ և բարեգործական կազմակերպություններ:

*https://escs.am/am/news/15323*

## Համերգ նվիրված Հայաստանի պետական կամերային նվագախմբի հիմնադրման 60-ամյակին



«Արամ Խաչատրյան» համերգասրահում ՀՊԿՆ-ը հանդես եկավ հոբելյանական համերգով՝ նվիրված հիմնադրման 60-ամյակին: Համերգին ներկա էին ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը և նախարարի տեղակալ Արա Խզմալյանը: *«Վստահ եմ, որ նվագախումբը շարունակելու է մնալ կամերային երաժշտության առաջատարը և բարձր մասնագիտական ու գեղարվեստական չափանիշների պահապանը»,* - շնորհավորական ելույթում նշեց նախարար Ժ. Անդրեասյանը: Նվագախմբի հիմնադրման 60-ամյա հոբելյանի կապակցությամբ նախարարը ԿԳՄՍ նախարարության Ոսկե մեդալով պարգևատրեց ջութակահար, նվագախմբի կոնցերտմայստեր *Աստղիկ Վարդանյանին*՝ նվագախմբում ունեցած նշանակալի ավանդի, երկարամյա գործունեության համար: Ողջույնի, օրհնության և շնորհավորանքի խոսքով հանդես եկավ նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն՝ Տեր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը:


*Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյան*


*Մեծագույն ներդրում ունեցողներից է Զարեh Սահակյանցը (տեսահոլովակում նրա լուսանկարն է)*

Համերգի ընթացքում ցուցադրվեցին փաստագրական կարճամետրաժ ֆիլմեր, որոնք ներկայացնում էին ՀՊԿՆ-ի 60-ամյա պատմությունը: Ցուցադրվեց նաև տարբեր տարիներին նվագախմբի հետ աշխատած աշխարահռչակ երաժիշտների ողջույնի և շնորհավորանքների տեսաուղերձները:

Համերգային ծրագիրը կազմված էր հայ և համաշխարհային կոմպոզիտորների ստեղծագործություններից. Լյուդվիգ Վան Բեթհովեն՝ «Ֆանտազիա» դաշնամուրի, մենակատար երգիչների և նվագախմբի համար, Op. 80, մենակատար՝ ՀԽՍՀ ժողովրդական արտիստ՝ Սվետլանա Նավասարդյան, Է. Բաղդասարյան՝ «Նոկտյուրն», մենակատար՝ ՀՀ վաստակավոր արտիստ՝ Նարեկ Հախնազարյան, Վ. Ա. Մոցարտ՝ Դաշնամուրային կոնցերտ թիվ 21, K. 467, 2-րդ մաս, մենակատար՝ ՀՊԿՆ-ի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ Վահան Մարտիրոսյան, Ա. Վիվալդի - «Ամառ»՝ «Տարվա եղանակներ» ստեղծագործությունից, RV 315, մենակատար՝ ՀՀ վաստակավոր արտիստ Նիկոլայ Մադոյան, Վ. Ա. Մոցարտ՝ «Դիվերտիսիմենտ», K. 136, Կոմիտաս՝ հատված «Պատարագ»-ից, մշակումը՝ Զարեհ Սահակյանցի:




Համերգին մասնակցում էին նաև Հայաստանի պետական կամերային նվագախումբը (գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Ռոբերտ Մլքեյան), «Հովեր» պետական կամերային երգչախումբը (խմբավար՝ Սոնա Հովհաննիսյան), Երևանի պետական կամերային երգչախումբը (խմբավար՝ Քրիստինա Ոսկանյան):

Համերգը լավագույն առիթներից մեկն էր հիշելու և վերագնահատելուՀայաստանի պետական նվագախմբի անցած հարուստ և բազմաբեղուն ուղին, մեծարելու և արժանին մատուցելու այդ ուղու կայացման գործին իրենց ավանդը ներդրած երաժիշտներին:

Նորանոր ստեղծագործական հաջողությունների բարեմաղթությամբ, շնորհավորում ենք նվագախմբին՝ հիմնադրման 60-ամյակի կապակցությամբ:

ՎԱՀԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ
*երաժշտագիտական բաժնի բակալավրական 1-ին կուրսի ուսանող*

## «Հայաստանի մարգարիտները» դաշնամուրային դուետի գարնանային հնչյունները

2023 թ. Նիդերլանդների Թագավորությունում գարունն ազդարարվեց դասական երաժշտության ջերմացնող հնչյունների ներքո՝ Հայաստանից ժամանած դաշնակահարներ՝ Անահիտ Ներսեսյանի և Մարինա Գևորգյանի՝ հայ և եվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործությունների կատարումներով երկու դաշնամուրի համար: Համերգներն շատ տպավորիչ էին և անցան մեծ հաջողությամբ: Հայ դաշնակահարներ՝ Յ. Ս. Բախի անվան միջազգային մրցույթի ոսկե մեդալակիր, ՀՀ վաստակավոր արտիստ, ԵՊԿ պրոֆեսոր Անահիտ Ներսեսյանը և միջազգային մրցույթների դափնեկիր Մարինա Գևորգյանը հրավիրված էին Նիդերլանդների Թագավորությունում Հայաստանի Հանրապետության դեսպանության և «Գեելվինկ» հիմնադրամի տնօրենության՝ հանձինս տիկին Դունիա Վերվեի և պարոն Բուիսմանի նախաձեռնությամբ: Կայացան երկու համերգներ՝ Ամստերդամ և Հաագա գեղատեսիլ քաղաքներում: Սույն թվականի փետրվարի 26-ին, Ամստերդամի «Լյութեր» թանգարանի հրաշագեղ դահլիճում դաշնակահարները հիացրեցին հանդիսատեսին 1891 թվականի «Եռարդ» գործիքի հրաշալի հնչողությամբ, իրենց տպավորիչ կատարումներով: Ծրագրում ընդգրկված էին նաև դաշնամուրային ստեղծագործություններ՝ գրված չորս ձեռքի համար: Համերգի սկզբում, տիկին Դունիան՝ ողջունելով հայ երաժիշտներին, ներկայացրեց նրանց ստեղծագործական ուղին, ինչպես նաև հյուրերին պատմեց մեծն Կոմիտաս Վարդապետի մասին: Հանդիսատեսը չափազանց հետաքրքրված էր հայ կոմպոզիտորական դպրոցի գոհարներով և դաշնակահարներին հայտնեց նոր ելույթների իրենց ակնկալիքի մասին: Համերգն է՛լ ավելի ամրապնդեց երկու երկրների բարեկամությունը և նպաստեց մշակութային երկխոսության զարգացմանը:



Մարինա Գևորգյան և Դունիա Վերվեի



Մարինա Գևորգյան, Անահիտ Ներսեսյան

Մարտի 3-ին, Հաագայի *«Piano Huis»*-ում կայացավ երկրորդ համերգը, որը նս անցավ մեծ հաջողությամբ: Այն նվիրված էր Դիվանագետի օրվան: Համերգն իրենց ներկայությամբ պատվել էին Նիդերլանդներում Հայաստանի Հանրապետության Դեսպան Ն. Գ. պարոն Տիգրան Բալայանը դեսպանության ամբողջ կազմով, ինչպես նաև մի շարք երկրների Դեսպաններ՝ Կոստա Ռիկայի Հանրապետության Դեսպան Ն. Գ. պարոն Առնոլդո Բռենես Կաստրոն և այլք: Ներկա էին նաև դիվանագիտական ներկայացուցիչներ, քաղաքական և գործարար աշխարհի պատվավոր հյուրեր, Հոլանդահայ «Աբովյան» մշակութային ակումբի ղեկավարները, հայ համայնքի ներակայացուցիչներ և բազմաթիվ պատվավոր հյուրեր ու լրագրողներ:

Անահիտ Ներսեսյանի և Մարինա Գևորգյանի կատարմամբ հնչեցին Բախի, Բեթհովենի, Շումանի, Կոմիտասի, Ա. Խաչատրյանի, Ա. Բաբաջանյանի, Է. Միրզոյանի, ինչպես նաև ճապոնացի կոմպոզիտոր՝ Նակադայի ստեղծագործությունները: Հանդիսատեսը մեծ խանդավառությամբ ընդունեց յուրաքանչյուր կատարումը: Համերգի ավարտին Նիդերլանդներում ՀՀ Դեսպան պարոն Տիգրան Բալայանը՝ կարևորելով այս 30 տարիների ընթացքում երկու երկրների միջև մշակութային կապերի զարգացումն և հետագա համագործակցության շրջանակների ընդլայնումը, կրկին ջերմորեն ողջունեց երաժիշտներին հրաշալի նախաձեռնության իրականացման առթիվ և շնորհավորանքի խոսքեր ուղղեց հարգարժան հյուրերին՝ Դիվանագետի Օրվա առթիվ:

Հայ երաժիշտներն անմոռանալի տպավորություններով վերադարձան Հայրենիք՝ նոր, հետաքրքիր նախաձեռնություններով լի եռանդով:

ՄԱՐԻՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
*Դաշնակահարուհի, մանկավարժ*

## *Ռ.Մելիքյանի անվան երաժշտական քոլեջի վերանորոգված լսարաններն անվանակոչվել են անվանի երաժիշտների անուններով*

Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջն այս տարի նշում է հիմնադրման 100-ամյակը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, նախարարի տեղակալ Արա Խզմալյանը և ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանն այցելել են երաժշտական քոլեջ՝ մասնակցելու վերանորոգված լսարանների բացմանն ու անվանակոչմանը: Դրանք անվանակոչվել են երաժշտարվեստի երախտավորների, անուններով, որոնք նաև կրթօջախի շրջանավարտներն են եղել, այդ թվում՝ Լուսինե Զաքարյանի, Էդուարդ Բաղդասարյանի, Գեորգի Մինասովի, Ռաֆայել Մանգասարյանի, Բորիս Սակկիլարիի: Լսարաններ են անվանակոչվել նաև մերօրյա արվեստագետների՝ Արմեն Բուդաղյանի և Ռոբերտ Ամիրխանյանի անուններով, որոնք ներկա էին միջոցառմանը: Նորաբաց լսարաններից յուրաքանչյուրում քոլեջի սաները ներկայացրել են տվյալ երախտավորի ստեղծագործություններից ընտրված կատարումներ:





Հյուրերի շրջայցը Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվ. պետական երաժշտական քոլեջում





Կատարումներով հանդես եկան քոլեջի ուսանողները



Ռոբերտ Ամիրխանյան



ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը շնորհավորել է քոլեջի մանկավարժական կազմին և ուսանողներին կառույցի 100-ամյակի կապակցությամբ և ընդգծել. *«Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջն այն կառույցներից է, որի գործունեությունը և պատմությունը վերաճել են կրթական բովանդակությունից և ձեռք են բերել մշակութաբանական նշանակություն, որովհետև սա թրծարան է, որից դուրս են գալիս մեր մշակութային, հոգևոր կյանքը հարստացնող ստեղծագործողները: Ըստ էության՝ նման կառույցների գործունեությամբ է, որ մենք մեզ կարող ենք համարել քաղաքակիրթ հասարակություն»:*

Փոխնախարարը փաստել է՝ երաժշտական կրթօջախները չափազանց կարևոր օղակ են կրթական համակարգում և գտնվում են պետական հոգածության ներքո:

Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի տնօրեն Վարազդատ Խաչումյանի տեղեկացմամբ՝ կատարված նորոգման աշխատանքներն իրականացվել են բարերարների աջակցությամբ՝ որպես նվեր 100-ամյա երաժշտական ուսումնական հաստատությանը: Հավելենք, որ վերանորոգվել են քոլեջի 8 լսարաններ և դահլիճը:

https://escs.am/am/news/15301

## Ժամանակակից կոմպոզիտորները եւ կատարողները Գյումրիում

1

2023 թ., մարտի 12-ին, Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ հանդիպում կոմպոզիտոր, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ Սվետլանա Ալեքսանյանի հետ՝ «Ժամանակակից կոմպոզիտորները և կատարողները Գյումրիում» ծրագրի շրջանակներում, որն անցկացվում է ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում: Սվետլանա Ալեքսանյանը ծնվել է 1965 թվականի հունվարի 31-ին, Երևանում, ավարտել է Պ.Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի տեսության (1982, դասատու՝ Է. Բաղդասարյան) բաժինը, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրի (Ն. Շամախյանի դասարան), կոմպոզիցիայի (Ղ. Սարյանի դասարան) բաժինները (1988 թ.) և ասպիրանտուրան մանի ներկայացավ Սվետլանա Ալեքսանյան կոմպոզիտորը: Վերջինս իր ստեղծագործություններից մի քանիսը ներկայացրեց գյումրեցի ունկնդրին: Հնչեցին հատվածներ կոմպոզիտորի խմբերգային, կամերային, օպերային, վոկալ ստեղծագործություններից, այդ թվում՝ «Նվիրումի խորալ մեդիտացիա Ղազարոս Սարյանի հիշատակին» (2008 թ.)՝ կամերային նվագախմբի համար գրված ստեղծագործությունը (կատ. Հայաստանի պետական կամերային նվագախումբը (գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Վահան Մարտիրոսյան), դիրիժոր՝ Ռուբեն Ասատրյան, «Տարափոխումներ» (2008–2009, «Էլեգիա», «Արևին», «Հ. Գ. Հրաժեշտ») կոմպոզիցիան՝ ջութակի և դաշնամուրի համար (կատարողներ՝ Նիկոլայ Մադոյան և Սվետլանա Ալեքսանյան),



Սվետլանա Ալեքսանյան



Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնի դահլիճ, 12.3.2023 թ.



Ներկայացնում է կոմպոզիտոր Սվետլանա Ալեքսանյանին երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, ԵՊԿ դոցենտ Օլյա Նուրիջանյանը



Հանդիպում կոմպոզիտոր ՀԿՄ անդամ Սվետլանա Ալեքսանյանի հետ՝ «Ժամանակակից կոմպոզիտորները և կատարողները Գյումրիում» ծրագրի շրջանակներում, իրականացող ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղ

(1991 թ.): 1991-ից նա Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ է, իսկ 2013-2016 թթ. նույն միության պատասխանատու քարտուղարը, հետագայում՝ աշխատակազմի ղեկավար:

Կոմպոզիտորի կյանքի ու ստեղծագործության կարևոր դրվագներին անդրադարձավ և հանդիպումը շատ հետաքրքիր վարեց երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, ԵՊԿ դոցենտ Օլյա Նուրիջանյանը, որի անչափ հետաքրքիր և դիպուկ հարցադրումների շնորհիվ ունկնդրին համակողմանի ... այնուհետև հնչեց «Նովել in D» ստեղծագործությունը:

Խոսելով այս ստեղծագործության մասին կոմպոզիտորը նշեց, որ իրեն միշտ հետաքրքրել է նովելը՝ որպես գրական ժանր, որին բնորոշ են՝ սուր, կարճ սյուժեն, պատմողական չեզոք ոճը, անսպասելի ավարտը: Եվ հենց այսպիսին էր նրա ստեղծագործությունը՝ սեղմ, խորհրդավոր և անսպասելի ավարտով: Անշուշտ, նրա երաժշտական լեզուն, ստեղծագործական միտքը շատ խորն է և փիլիսոփայական: Ուսանողները ևս հարցեր հնչեցրեցին, հետաքրքրվեցին Ս. Ալեքսանյանի ուսանողական տարիներով և հուշերով: Հանդիպման ավարտին հնչեց «Հերոսների մայրերին» ստեղծագործությունը, որը խորապես հուզեց ներկաներին: Շատերի խոստովանությամբ՝ հանդիպումից ստացած տպավորությունները դեռ երկար ժամանակ կուղեկցեն նրանց:

ՀԵՂԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
*ԵՊԿ ԳՄ 2-րդ կուրսի երաժշտագետ*

## «Երգարան»- Շնորհանդես

*«Այնպիսի բանաստեղծներով,
ինչպիսին Սայաթ-Նովան է,
պետք է պարծենա բովանդակ մարդկությունը.
նրանք երկնքի վեհ ընծաներն են,
որ ուղարկվում են ոչ ամենքին և ոչ հաճախակի.
նրանք Նախախնամության ընտրյալներն են,
որոնք օրհնանք են դրոշմում իրենց
դարին և իրենց հայրենիքին»:*
***ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎ***

*«Սայաթ-Նովան այնպես ստեղծագործեց, որ մտավ
ո՜չ թե գրականության պատմության, այլ գրականության
մեջ՝ կենդանի և ապրող, կարդացվող ու երգվող, միշտ
ճարվող, բայց միշտ փնտրվող գրականության մեջ:
Մտավ իբրև աղ: Այսքանով էլ Սայաթ-Նովան
անհատ չէ, թեկուզ և մեծ անհատ,
այլև ժամանակ լցնող շունչ է, տարածություն
լցնող օդ, և այդպիսին մնում է մինչև հիմա…»:*
***ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ***




Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի ուսանողների ելույթը

Մուշեղ Հարությունյան, Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի սաները

Դեկտեմբերի 14-ին Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջում տեղի ունեցավ քոլեջի երգեցողության բաժնի դասախոս, ԵՊԿ դոցենտ Մուշեղ Հարությունյանի կողմից կազմված Սայաթ-Նովայի «Երգարան» երգերի ժողովածուի շնորհանդեսը, նվիրված հայ մեծ աշուղի ծննդյան 300-ամյակին՝ քոլեջի ուսանողների մասնակցությամբ:

Երգերի սույն ժողովածուն վերջերս հրատարակվել էր «Լուսակն» հրատարակչությունում: Այն կազմելիս հեղինակը հիմք է ընդունել մինչ այսօր հրատարակված բոլոր սայաթնովյան երգարանները և պարունակում է հայ խոշորագույն աշուղ-բանաստեղծ Սայաթ-Նովայի գրի առնված քսանութ հայերեն երգերի նոտաները՝ ամբողջական բնագրերով հանդերձ: Ժողովածուի խորհրդատու-խմբագիրն է՝ սայաթնովագետ, բանասիրական գիտությունների դոկտոր Հենրիկ Բախչինյանը:

Նշանակալի է, որ ժողովածուում ներկայացված են նաև երգերի գրական արևելահայերեն տողացի փոխադրությունները, ինչպես նաև բառարան, որտեղ բացատրված են դժվարընկալելի բառերը, անուններն ու դարձվածները:

*«Ամէն մարդ չի կանա կարդա, իմ գիրըն ո՛ւրիշ գըրէն է»․*

11

## ԽՈԿՈՒՄ ...



*Սիմոն Հովհաննիսյան*

Այդ օրվա համերգային երեկոյի ծրագիրն ընդգրկում էր կոմպոզիտոր Սիմոն Հովհաննիսյանի տարբեր ժանրի ստեղծագործությունները՝ երգից ու խմբերգից մինչև սոնատ, կվարտետ, սիմֆոնիետ: Եվ դա լոկ մի մասն էր այն բազմաքանակ երկերի, որ ստեղծել է նա քառորդ դարի արգասավոր գործունեության ընթացքում: Դաշնամուրի համար գրված նրա պրելյուդը և տոկատան, որոնք հնչեցին հեղինակի դստեր՝ դաշնակահարուհի Գայանե Հովհաննիսյանի կատարմամբ, ժանրի ավանդական հատկանիշները խտացնող արտահայտիչ ու գողտրիկ ստեղծագործություններ են: Կոմպոզիտորի դաշնամուրային գործերի մեջ նոր շերտեր են բացում վերջին տարիներին ստեղծած մանրանկարների շարքը, որի համար Ս. Հովհաննիսյանը 1986 թվականին Չեխոսլովակիայում կայացած կոմպոզիտորների միջազգային մրցույթում արժանացել է առաջին մրցանակի: Երաժշտական թեմաներով միմյանց հակադիր, բայց և միաժամանակ իրար լրացնող ու ամբողջացնող հինգ պիեսները Սվետլանա Նավասարդյանի կատարմամբ հնչեցին պարզ ու անմիջական՝ ազգային երանգներով ու գույներով հագեցած: Մանրանկարների նրբագեղությունը, ձևի հղկվածությունն ու ասելիքի որոշակի լարվածությունը արդյունք են հեղինակի ստեղծագործական այն կուտակումների, որ առկա են նրա «Պրելյուդներ ու պարեր» շարքում, դաշնամուրային պոեմի, հոբոյի ու ֆլեյտայի համար գրված հիանալի զուգանվագներում, ինչպես նաև դաշնամուրի, ալտի սոնատներում:

Սոնատը հնչեց Յուրի Մանուկյանի կատարմամբ և վկայեց 70-ական թվականներին կոմպոզիտորի ստեղծագործության մեջ թեմատիկ-կերպարային սկզբունքների հաստատման, ոճական շրջանակների ընդլայնման, միաժամանակ ազգային կերպարի դրսևորման միտումները: Առաջին մասի ազատ-իմպրովիզացիոն շարադրանքում ծավալվող մեղեդային գիծը՝ խարսխված «Հորժամ» երգասացության դարձվածքների վրա, զարգանում, բացվում ու շերտավորվում է որպես դրամատիկ մենախոսություն՝ միախառնվելով ճակատագրի ողբերգականություն խորհրդանշող միջնադարյան ստեղծագործության հնչյուններին: Դրան հակադրվող երկրորդ մասի աշխույժ և տոկուն թեմատիկ շերտերը, ներծնված ազգային պարերի առնական ռիթմերով, տանում են դեպի կենսախինդ ու լուսավոր տրամադրությունների հաստատում:

Հիշատակված գործերում ակնհայտ է կապը ազգային երաժշտական ակունքների հետ: Այդ կապը բացահայտվում է ինչպես ժողովրդական երաժշտության նմուշների օգտագործմամբ, այնպես էլ ազգային շնչով ստեղծված ինքնուրույն հորինվածքի թեմաներում: Ֆոլկլորային նմուշների օգտագործումն ու զարգացումը, լինի դա գեղջկական երգ ու պարեղանակ, թե միջնադարյան մեղեդի, միշտ առկա են կոմպոզիտորական նուրբ ճաշակը, ազգային տարերքի հրաշալի զգացողությունը:



*Հայաստանի կույրերի միավորման երգչախումբ, խմբավար Կարո Ալեքսանյան, գեղարվեստական ղեկավար Սիմոն Հովհաննիսյան*

Ֆոլկլորային նմուշների ընտրությունը կոմպոզիտորը կատարում է ոչ այնքան երաժշտական-թեմատիկ ցայտուն նյութի օգտագործմամբ, որքան ազգային երաժշտամտածողության սկզբունքների կիրառությամբ, միաժամանակ սեփական հորինվածքներում պահպանելով ազգային բույրն ու հնչերանգի ՛ցայտունությունը, դրանք զուգորդելով արդի երաժշտության արտահայտչամիջոցներին: Դրա ամենավառ արտահայտություններից է սիմֆոնիետը՝ լարային, նվագախմբի համար: Հեղինակն այն նվիրել է՝ Ա. Իսահակյանի հիշատակին՝ նրա ծննդյան 100-ամյա հոբելյանի առթիվ: Սիմֆոնիետի բովանդակությունը հայ ժողովրդի պատմական անցյալն է, նրա քաջարի ոգին, նրա վշտի ու սիրո արտահայտությունները: Այն հնչել է տարբեր կոլեկտիվների կատարմամբ, ձայնագրվել «Մելոդիա» ֆիրմայի կողմից, ՍՍՀՄ Մեծ թատրոնի նվագախմբի մենակատարների կատարմամբ (դիրիժոր՝ Կ. Սիմոնով): Հեղինակային երեկոյին սիմֆոնիետը կատարեց Հայաստանի լենինյան կոմերիտմիության դափնեկիր Երևանի կամերային նվագախումբը (դիրիժոր' Զ. Վարդանյան): Հայրենիքի, ժողովրդի, նրա հոգևոր ու մշակութային արժեքների թեման կենտրոնական տեղ է գրավում Ս. Հովհաննիսյանի ստեղծագործության մեջ: Այստեղ երաժշտին մեծապես օգնում է պատմաբան Հովհաննիսյանը և այդ զուգորդության հիանալի օրինակը նրա՝ Կոմիտասի հիշատակին նվիրված «Ռեքվիեմն» է:

Երաժշտի քնարական-հայրենասիրական զգացմունքները միահյուսվում են նրա քաղաքացիական ակտիվ դիրքորոշմանը, որից էլ ծնվել են «Զոն ազատարար զինվորին», «Հիմն՝ իմ սերնդին», «Հայաստան», «Հայրենիք. իմ» և այլ խմբերգերը: Դրանցից մի քանիսն արժանացել են հանրապետական մրցանակների: Հեղինակային երեկոյին կատարված «Քելե, լաո», «Աշուն», «Հրաշք Հայաստան» և այլ խմբերգեր, ինչպես նաև «Կուզես լինիմ», «Կաքավ» ռոմանսները ներկայացնում են Ս. Հովհաննիսյանի վոկալ-խմբերգային երաժշտության ուշագրավ էջերը, հավաստում նրա երգամտածողության ինքնատիպությունը:

Վոկալ-խմբերգային երաժշտությունը միշտ եղել է կոմպոզիտորի ստեղծագործական հետաքրքրությունների կենտրոնում, որն ավելի արգասավոր է դարձել վերջին տասը տարում, երբ նա իրականացնում է Հայաստանի կույրերի միավորման երաժշտական կոլեկտիվների գեղարվեստական ղեկավարությունը: Միավորման երգչախումբը (խմբավար՝ Կարո Ալեքսանյան) Հայաստանում և Միության շատ քաղաքներում իր համերգային գործունեության ընթացքում հնչեցրել է Ֆորեի, Գունոյի «Ռեքվիեմները» և մեծակտավ այլ գործեր: Այն հայ կոմպոզիտորների խմբերգային ստեղծագործությունների բարձրարվեստ պրոպագանդիստ է, Հայաստանի կոմպոզիտորների միության համագումարների, պլենումների ու փառատոների մշտական մասնակիցը, ժամանակակից խմբերգային կտավների հիանալի մեկնաբանը:

*«Սիմոն Հովհաննիսյանի ստեղծագործական ճակատագիրը բարդ ու անսովոր է եղել,* - գրել է արվեստագիտության դոկտոր Ե. Դոլինսկայան, - *կյանքը նրան դաժան փորձություններ է տվել, բայց կամքն ու սերը արվեստի նկատմամբ ավելի ուժեղ են գտնվել ու անսասան»:* Հիրավի, բախտի ամեն մի մթագնում որպես իմաստության լույս է անդրադարձել արտիստի մեջ:

Ցավի, խոկումի և տոկունության զգացմունքներով է շաղախված Ս. Հովհաննիսյանի 3-րդ Կվարտետը, որի առաջին կատարումը վաստակավոր կոլեկտիվ Կոմիտասի անվան քառյակի կողմից դարձավ հեղինակային երեկոյի բարձրակետը: 1987-ին գրված այս ստեղծագործությունը նվիրված է կոմպոզիտորի որդու հիշատակին: Վշտաբեկ, բայց զուսպ հնչերանգներով ներծծված, հոգևոր երգասացություններին աղերսվող թեման, որ ուղեկցվում է հուզական-դրամատիկ վերելքներով ու վայրէջքներով, մտքի լարված և անընդհատ շարժմամբ, ներկայանում է «Ռեքվիեմին» հատուկ ողբերգականությամբ: Ողբերգություն, որ տանում է դեպի Ոգու բարձունքները;

ԺԱՆՆԱ ԶՈՒՐԱԲՅԱՆ
*Արվեստագիտության թեկնածու*
*ԵՊԿ պրոֆեսոր*

## Աշոտ Զոհրաբյան



*Աշոտ Զոհրաբյան*

Կյանքից հեռացել է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ԵՊԿ կոմպոզիցիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աշոտ Զոհրաբյանը:

Հայ ժամանակակից ստեղծագործական դպրոցի ամենամեծերից էր... Մեր կոնսերվատորիայում ուսուցիչ, դաստիարակ, խրատող ու Մարդ: Նրա ջերմ, առաքինի ներկայությունը մեզ համար անխառն ու մաքուր անձի հետ հաղորդակցության մեջ լինելու երանելի պարգև էր:

*«Աշոտ Զոհրաբյանն իր ժամանակից առաջ է... միայն բացառիկ անհատներն են կարող գտնել ու մեզ՝ սովորական մահկանացուներին հասցնել տիեզերքի անիմանալի հնչյունները»,*- տարիներ առաջ գրել էր Լևոն Իգիթյանը:

Որպես կոմպոզիտոր Աշոտ Զոհրաբյանը միանգամից գտավ իր երաժշտության մտածողության սկզբունքը, իսկ ժամանակիցներն այն բնորոշեցին որպես արտաքին անշարժության ու ներքին դինամիկայի համադրում: Կոմպոզիտոր Ռուբեն Սարգսյանը դեռևս 1980-ականներին նշել էր Աշոտ Զոհրաբյանի երաժշտության խոստովանական բնույթի, անձնականի ու համընդհանուրի հարմոնիայի, մարդկության հոգևոր կեցության խորքերի մեջ ներթափանցման մասին, ինչը «Նվիրում Մեծարենցին» ստեղծագործությանը տվել է գործիքային մեսսայի գծեր: Այսպիսի առանձնահատկություն կարելի է տեսնել նրա ամբողջ ստեղծագործական դիմանկարի մեջ:

Աշոտ Զոհրաբյանի յուրաքանչյուր գործը մարդասիրական, ոգու հնչյունավորման մի ճանապարհ էր՝ Ռենեսանսի, Բարոկկոյի ու Կոմիտասի շուրջ անդավաճան գեղագիտական դավանանքով: Աշոտ Զոհրաբյանը կարծում էր, որ XXI դարի երաժշտությունն ավելի է բարիացել, տաքացել, մեղմացել, և նա աշխատում էր դուրս գալ լարվածությունից, գնալ դեպի այդ կողմը՝ փափկանալ երաժշտության, ավելի կոնկրետանալ ինտոնացիայի մեջ: Իր համար թանկ էր Բարոկկոն, մինչև վերջ տաքացած էր բացառիկ դարաշրջանի հանդեպ և իր ուսանողներին փոխանցում էր այդ տեսակետը: Իր համոզմունքով նա հանձնված է վաղ Ռենեսանսին, որովհետև այն մեծատառով ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ է՝ հստակ գծերով, ինտոնացիաներով, խտությամբ, պարզությամբ: Նա վստահ էր, որ պետք է ամեն անգամ սկսել Կոմիտասից և մեր մոդալ երաժշտությունից, այդպիսի հիմքով հնարավոր է ունենալ անվերջանալի լադային տրամաբանություն, և այն կարելի է փոփոխել: Կորցնել դա՝ նշանակում է կորցնել սյունը: Կոմիտասը մաքրության, հստակության, ականդեմիզմի սնող առու է:

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ԵՊԿ կոմպոզիցիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աշոտ Զոհրաբյանի մանկավարժական գործունեությունը կոնսերվատորիայում սկսվել է 1988-ից, մինչ այդ մեծանուն Գրիգոր Եղիազարյանի մասնագիտական դասարանի շրջանավարտը (1971 թ.) տեսական դասընթացներ էր վարում Առնո Բաբաջանյանի անվան երաժշտամանկավարժական ուսումնարանում (1972-2008 թթ.): Գրեթե 40-ամյա պատմությամբ զոհրաբյանական դասարանի շրջանավարտ կոմպոզիտորների գործունեությունը կապված է հայրենական ու արտերկրի երաժշտական մշակույթի տարբեր ասպարեզների հետ:

Կամերային, գործիքային, վոկալ-գործիքային ստեղծագործությունների հեղինակ Աշոտ Զոհրաբյանի երաժշտությունը հնչում է աշխարհի տարբեր երկրներում, արդի կատարողական արվեստում բացառիկ ծառայությամբ առանձնացող երաժիշտների մեկնաբանմամբ: Կոմպոզիտորի ստեղծագործությունները տպագրում են արտերկրի երեք հրատարակչությունները՝ *Le Chant Du Mond* (Ֆրանսիա), *Da Vinci* (Ճապոնիա), *Sordino* (Շվեյցարիա):

Ընդամենը մի քանի օր անց՝ հունվարի 29-ին, Աշոտ Պատվականի Զոհրաբյանը կդառնար 78 տարեկան...

***https://www.youtube.com/watch?v=_k3coKeEPIE***
***https://www.youtube.com/playlist...***

10

ասել է Սայաթ-Նովան՝ նկատի ունենալով իր ստեղծագործությունների բարդ և դժվար ընկալելի լեզուն: Այն փորձել են մատչելի դարձնել լայն հանրության համար սայաթնովագետների մի քանի սերունդ, քանզի սայաթնովյան այդ խիստ ինքնօրինակ լեզուն հաճախ լիովին չեն ընկալում թե՛ կատարողները և թե՛ ունկնդիրը: Համագործակցելով սայաթնովագետ Հենրիկ Բախչինյանի հետ ժողովածուի հեղինակը փորձել է լուծել այդ խնդիրը:

«Երգարան»-ի տպագրությունը հովանավորեցին «ՄԱՅԱԴ» Տուր տուրիստական ընկերության տնօրեն՝ Մայիս Մելիքյանն ու Հայ օգնության միության (ՀՕՄ) Հայաստանի շրջանային վարչությունը: Ժողովածուն նախատեսված է երաժշտական քոլեջների և բարձրագույն երաժշտական ուսումնական հաստատությունների սովորողների համար:

*Խմբագրական*




Փետրվարի 2-ին *«Erasmus Project»-ի #Musical Bounce Back*-ի մասնակից մեր ուսանողները ելույթ կունենան Աշտարակի Արտեմի Այվազյանի անվան երաժշտական դպրոցում:

2022 թվականի հոկտեմբերից մեկնարկած նախագիծը հանրահռչակում է ժամանակակից կին կոմպոզիտորների գործերը: Այսօրվա համերգին հնչելու են հայ կոմպոզիտորական դպրոցը ներկայացնող հեղինակների՝ Նարինե Զարիֆյանի, Աննա Ազիզյանի, Նարինե Մխիթարյանի, Իրինա Խաչատրյանի, Արմենուհի Կարապետյանի, նաև կոնսերվատորիայի ուսանողներ՝ Անի Ռուբենյանի և Շուշան Արևշատյանի կամերային օպուսները:

* * *

«Մեկնարկ» ծրագրի անդամ Արթուր Գրիգորյանը միջազգային մրցույթում արժանացել է մրցանակների

Արաբական Միացյալ Էմիրություններում փետրվարի 12-




16-ն անցկացվել է *«FUJAIHRAH»* դաշնակահարների 4-րդ միջազգային մրցույթը, որին մասնակցել է «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի անդամ, ԵՊԿ ուսանող Արթուր Գրիգորյանը (դասատուներ՝ Կարինե Օհանյան, Արմեն Բաբախանյան):

Մրցույթին մասնակցել են 65 պատանի և երիտասարդ դաշնակահարներ՝ 21 երկրից, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնությունից, Կորեայից, Ճապոնիայից, Ուկրաինայից, Բրազիլիայից, Չինաստանից և այլն:

Մրցույթն անցկացվել է չորս տարիքային խմբով: Արթուր Գրիգորյանը մասնակցել է 19-36 տարեկան դաշնակահարների տարիքային խմբում: Մրցույթի բոլոր փուլերում Արթուր Գրիգորյանը հանդես է եկել կատարողական և մասնագիտական բարձր վարպետությամբ և արժանացել առաջին մրցանակի, «Մեծ գավաթի» և ոսկե մեդալի:

Մրցույթի հանձնախմբի կազմում ընդգրկված էին անվանի երաժիշտ-դաշնակահարներ Հենրի Զիքֆրիդսոնը (Ֆինլանդիա), Նատալյա Տրուլը (ՌԴ), Վոլկեր Ցվեչկեն (Գերմանիա), Օլեգ Պոլյանսկին (Ուկրաինա), Յուսուկե Կիկուչին (Ճապոնիա):

Հիշեցնենք, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ իրականացվող «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագիրն ուղղված է առավել տաղանդավոր պատանի երաժիշտ-կատարողների (դասական երաժշտական գործիքներ՝ դաշնամուր, ջութակ, թավջութակ) զարգացմանը, կատարելագործմանը և խրախուսմանը՝ հետագայում միջազգային ասպարեզում հայկական կատարողական արվեստը ներկայացնելու նպատակով:

* * *

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Փողային և հարվածային գործիքների ամբիոնի առաջին կուրսի կլառնետահար Էդուարդ Խորոզյանը (ղեկավար՝ դասախոս Հրազդան Սարգսյան) *«Yamaha Scholarship Program 2022-2023»*-ի առաջին մրցանակակիրն է և արժանացել է կրթաթոշակի գլխավոր մրցանակին՝ Yamaha պրոֆեսիոնալ մոդելի կլառնետին:

Այս ծրագրի նպատակն է օգնել կոնկրետ տարածաշրջանի երաժշտական մշակույթին՝ աջակցելով երիտասարդ երաժիշտներին իրենց ստեղծագործական ներուժի իրացման և երաժշտական կարիերայի հեռանկարների զարգացման գործում: 2022 թվականի սեպտեմբերից մեկնարկած *«Yamaha Scholarship Program 2022-2023»*-ին հայտ ներկայացրած մասնակիցներն ուղարկել էին իրենց կատարումների ձայնագրությունները, հունվարի 23-ին հայտարարվեցին առաջին լսումի արդյունքները, իսկ փետրվարի 12-ին Դուբայում կայացավ վերջնական կենդանի կատարմամբ փուլը: Էդուարդ Խորոզյանի համար առաջնայինը լավ գործիք ունենալու երազանքն իրականացնելն ու հաղթանակի վրա կենտրոնանալն էր: Ի վերջո, 80 մասնակիցներից վեցն արժանացավ գործիքների, բայց բոլորից բարձրը, նկատելին ու տարբերվողը Էդուարդ Խարոզյանի նվագն էր, ինչի մասին նշեց հանձնաժողովի նախագահը՝ իտալացի վարպետ կլառնետահար Ռիկարդո Կրոչիլան:

Էդուարդ Խորոզյանի մասնակցած նախորդ մրցույթները կայացել են աշխարհի տարբեր երկրներում՝ ունենալով լավագույն արդյունքներ, դրանցից են *«Sava Dimitrov»* կլառնետահարների միջազգային մրցույթի (Բուլղարիա, 2023թ.) 3-րդ մրցանակը, Լուգանոյի 1-ին միջազգային երաժշտական մրցույթի (Շվեյցարիա, 2022թ.) 1-ին մրցանակը, *«Nouvelles ntoiles»* երիտասարդ տաղանդավոր երաժիշտների միջազգային մրցույթի (Ֆրանսիա, 2022թ.) 1-ին մրցանակը, «Հարմոնիա» մրցույթի (Ռուսաստան, 2021 թ.) հաղթանակը, *«Jeunes talents en musique Classique»* միջազգային մրցույթի (Ֆրանսիա, 2021թ.) Մեծ մրցանակը և այլն: Երիտասարդ երաժշտի բեմական կյանքի համար կարևոր է մինչ օրս լինել Հայաստանի «Նոր անուններ» ծրագրի մասնիկը (ղեկավար՝ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Սիլվա Մեքինյան) և այս տարի նույնպես կմասնակցի Ֆրանսիայում կայանալիք հյուրախաղերին՝ միանալով ծրագրի մյուս շնորհալի պատանի երաժիշտ-կատարողների:

Էդուարդ Խորոզյանի կյանքում կոնսերվատորիայի էջը մի քանի ամսվա պատմություն ունի. սկսվել է 2022 թվականի ընդունելության քննություններին փայլուն արդյունքներով, միակը՝ գերազանց գնահատականներով և շարունակվում է ջանասեր ուսումնառությամբ: Կլառնետի մասնագիտացումն անցնում է իր ղեկավարի Հրազդան Սարգսյանի դասարանում, որտեղ գործում է արվեստի ու տեխնիկայի եզրերը համահավաք մարմնավորող սկզբունքը: Էդուարդ Խորոզյանի համար այսպիսի մոտեցումը հարազատ է դեռ մանկությունից, երբ հայրիկի՝ իր առաջին ուսուցչի, Ազգային պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի կլառնետահարների կոնցերտմայստեր, բազմավաստակ մանկավարժ Սուրեն Խորոզյանի դասերն էր ստանում՝ սկսվելով Ղազարոս Սարյանի անվան Արվեստի դպրոցում, ապա՝ Պ. Չայկովսկու անվան ՄՄԵԴ-ում: Փորձառու և գթասիրտ ծնողի ներկայությունը մեր մրցանակակրի համար կրկնակի չափաբաժին ունի. բեմում նրա կլառնետը միշտ հնչում է մայրիկի՝ դաշնակահար Լուսինե Դինեսյանի նվագակցությամբ, այս անսամբլում առավել ցայտուն է դառնում Էդուարդի եզակի ազնվափայլությամբ տարբերվող խառնվածքը:

Ուշադիր նայեք Էդուարդ Խորոզյանին, եթե ուզում եք տեսնել առանձնահատուկ գորովանքով իր ճանապարհը, մասնագիտությունն ընտրած երիտասարդի, իսկ ի՞նչ ժպտուն աչքերով է արտահայտվում կլառնետահարների համար կոնցերտային ժանրի հիմնադիր, միշտ ջահել ու ազատ շնչառության հմայք ունեցող Կառլ Մարիա ֆոն Վեբերի մասին, ում գործերը մեծ հաճույքով է նվագում: Այս հեղինակի Կոնցերտինոն էր ներկայացրել *«Yamaha Scholarship Program 2022-2023»*-ի մրցույթի առաջին՝ ձայնագրությունների փուլում և այդպես սկսվեց 2023 թվականի առաջին հաղթանակը: Էդուարդի պարգևը՝ *YAMAHA* բարձրակարգ որակի կլառնետը դեռ տանն է հնչում, քանի դեռ գործիքը նոր է, այն չի կարելի տևական շահագործել: Առաջին երկու շաբաթների ընթացքում թույլատրելի է նվագել օրական 20-30 րոպե:

Էդուարդ Խորոզյանի և Փողային-հարվածային գործիքների ամբիոնի նոր հաջողություններն առջևում են:

*Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հանրային կապերի բաժին*

### «ԵՐԱԺԻՇՏ» ամսաթերթի 2022 թ. տարեկան հաշվետվություն*

հազ. դրամ

| | |
|---|---|
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների իրացումից հասույթ (համախառն եկամուտ) ընդամենը | 10,8 |
| Այդ թվում եկամուտ՝ ամսաթերթի բաժանորդագրությունից, ամսաթերթի հատավաճառից, գովազդից | 10,8 |
| Նվիրատվության մասնաբաժնի չափը | 0 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների իրացումից շահույթ (վնաս) | (1,2) |

* Հրապարակվում է «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն:

### ՆՎԻՐՈՒՄ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՍԱՐԱՋԵՎԻ ԾՆՆԴՅԱՆ 145-ԱՄՅԱԿԻՆ

5

այնպես էլ այդտեղ առկա մեծ թվով շատ կարևոր օրինակներով, որոնք բիբլիոգրաֆիկ հազվագյուտ նմուշներ են, ինչպես սեփական ձեռքով կատարված ձեռագրեր, այնպես էլ՝ կոմպոզիտորների ինքնագրեր: Այս գրադարանը նվիրաբերելով Երևանի կոնսերվատորիային, նա նպատակ ուներ Հայաստանում ստեղծել ֆունդամենտալ նոտային գրադարան, ինչից հայ երաժիշտերն այն տարիներին (1930-ականների վերջը) բացարձակ զրկված էին: Կ.Սարաջևը 22 տարեկանից կարողացավ հավաքել նոտաների մի հազվագյուտ գրադարան, որի մյուս մասը նույնպիսի հիմք է դարձել Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի Կ. Սարաջևի անունը կրող գրադարանի ձևավորման համար: Ծովինար Մովսիսյանն իր զեկուցման մեջ անդրադառնալով ԵՊԿ Կ. Սարաջևի անվ. գրադարանի այսօրվա աշխատակիցներին և շենքում սկսված հիմնանորոգման ամբողջ նախապատրաստական ընթացքին, նշեց, որ, նրանց առօրյա ծառայությունը չի չափվում ոչ մի միավորով: Դրա միակ բացատրությունը, որ Վարվառա Հովհաննիսյանի ղեկավարած անձնակազմն իր կյանքը չի պատկերացնում առանց գրադարանի ամենօրյա աշխատանքի: Գիտաժողովին ելույթ ունեցած բանախոսներն էին՝ ԵՊԿ Երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու Լուսինե Սահակյանը, նույն ամբիոնի դոցենտ, արվեստագիտության թեկնածու Նարինե Ավետիսյանը, ՀՀ ԳԱԱ ԱԻ ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Մարիաննա Տիգրանյանը, ՀՀ ԳԱԱ ԱԻ գիտաշխատող Արուսյակ Պետրոսյանը, «Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագիր Գոհար Շագոյանը: Զեկուցումների միջոցով տարբեր դիտանկյուններից ներկայացվեցին Կ. Սարաջևի կյանքը, գործունեությունը, ընտանիքը, դիրիժորական դպրոցն ու նրա հիշատակին առնչվող վկայությունները: Նիստը եզրափակվեց Նվագախմբային ֆակուլտետի դեկան, դիրիժոր Ռուբեն Ասատրյանի մի քանի հիշողություններով: «Սարաջևյան ընթերցումներ» գիտաժողովի կազմակերպիչների որոշմամբ ժամանակավոր ցուցադրությունն իր վերջնական հանգրվանը կգտնի այս տարի 70-ամյա հոբելյանը նշող Կ. Սարաջյանի անվ. երաժշտական դպրոցում:

*Երևանի Կոմիտասի ավան պետական կոնսերվատորիայի հանրային կապերի բաժին* *aravot.am/2022/11/06/1302837/*

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.
ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԱՋՅԱՆ, ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ ՄԱՐԳԱՐԻՏԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Թողարկման պատասխանատու՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Խմբագիրներ՝ ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ (հայ. լեզու), ՍՈՖԱ ԱԶՆԱՈՒՐՅԱՆ (ռուս. լեզու)
Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին:
Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Ծավալը 12 էջ: Ստորագրված է 25.03.2023:
Գինը 200 դրամ: Տպաքանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (conservatory.am): Այլ ԶԼՄ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրություն նշված հասցեով.

0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am,
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-996490150508214/

